Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԶԻՆԱԿԻՑԸ
(Բոգդան Կնունյանցի ծննդյան 100-ամյակի առթիվ)

ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ

«Նա դեռ 20 տարեկան էլ չկար, երբ հարեց մեր կուսակցությանը,— Բ. Կնունյանցի մահվան առթիվ գրել է Ստ. Շահումյանը,—և այդ ժամանակվանից էլ նրա ամենահավատարիմ ու ամենաազնիվ անդամներից մեկն էր։ Նա չէր ապրում, այլ վառվում էր իր գեղեցիկ կյանքի այդ տասը տարիների ընթացքում, որը նա ամբողջությամբ, առանց մնացորդի, նվիրեց սոցիալիզմի ու դեմոկրատիայի համար մղվող պայքարին»[1]։ Հիրավի, Բ. Կնունյանցը մեր կուսակցության ականավոր գործիչներից էր, Վ. Ի. Լենինի հայ զինակիցներից մեկը՝ պրոֆեսիոնալ հեղափոխական, աննկուն բոլշևիկ, որը եռանդագին մասնակցություն է ունեցել կուսակցության ստեղծման գործին և Ռուսաստանում ծավալված հեղափոխական շարժմանը։

Բոգդան Միրզաջանի Կնունյանցը[2] ծնվել է 1878 թ. նոյեմբերի 14 (26)-ին Շուշիի դավառի Նընգի գյուղում։ Շուշիի ռեալական ուսումնարանն ավարտելուց հետո Բ. Կնունյանցը 1896 թ. ընդունվել է Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը։ Այդտեղ էլ նա սկսել է իր հեղափոխական գործունեությունը։ Ինչպես հայտնի է, այդ ժամանակ Պետերբուրգում գործում էր Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ 1895 թ. ստեղծված «Պետերբուրգի բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությունն»-ը, որը հսկայական նշանակություն ունեցավ մեր կուսակցության ստեղծման համար, հանդիսացավ նրա առաջին լուրջ սաղմը։ «Պայքարի միությունն»-ը ուներ ինտերնացիոնալ կազմ։ Նրանում աշխատել են նաև հայ գործիչներ, այդ թվում Բ. Կնունյանցը, որը 1897 թ. «Միության» հանձնարարությամբ պրոպագանդիստական աշխատանք է կատարել բանվորների շրջանում, օգնել «Միության» հրատարակություններին և դրանց տարածման գործին։

Հեղափոխական գործունեության համար Բ. Կնունյանցը շուտով վտարվում է ինստիտուտից և արտաքսվում Կովկաս։ Այստեղ նա դառնում է Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների աչքի ընկնող ղեկավարներից մեկը, ակտիվ մասնակցություն ունենում կուսակցության Բաքվի կոմիտեի ստեղծման, ՌՍԴԲԿ Կովկասյան միության հիմնադրման գործին։ Բաքվի կոմիտեն հենց սկզբից կանգնած էր լենինյան-իսկրայական դիրքերում։ Կոմիտեի մեջ մտնում էին Լ. Գալպերինը, Ա. Ենուկիձեն, Վ. Կեցխովելին, Բ. Կնունյանցը, Մ. Մելիքյանը և ուրիշներ[3]։ 1902 թ. կեսերին Թիֆլիսում

---

1 Ստ. Շահումյան, երկեր, երեք հատորով, հ. 2, էջ 153։

2 Բ. Կնունյանցի կյանքի և հեղափոխական գործունեության մասին մանրամասն տե՛ս Հ. Ինձիկյան, Բոգդան Կնունյանց, Երևան, 1957, նույնի ռուսերեն հրատարակությունը՝ 1961 թ.։

3 «Очерки истории коммунистических организаций Закавказья», часть первая, Тбилиси, 1967, էջ 61։

ձևավորվեց «Հայ սոցիալ-դեմոկրատների միություն»-ը, «ուր համախմբվեցին մարքսիստորեն պատրաստված, հեղափոխական փորձառություն ունեցող մի խումբ սոցիալ-դեմոկրատ գործիչներ»[4]։ «Միության» աչքի ընկնող անդամներից էր նաև Բ. Կնունյանցը։ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» պատմական ծառայություններից մեկը հայերեն լեզվով մարքսիստական անլեգալ թերթի ստեղծումն էր։

«Միության»-ը հաջողվեց 1902 թ. հոկտեմբերին լույս ընծայել «Պրոլետարիատ» թերթի առաջին և միակ համարը։ Թերթը տպագրված էր «Իսկրա»-ի գաղափարներով։ Նրա երևան գալը, ինչպես ճիշտ նկատել է Մ. Սամեդովը, մեծ իրադարձություն էր «ոչ միայն Հայաստանի սոցիալ-դեմոկրատների, այլև ամբողջ Անդրկովկասի կյանքում։ Թերթն առանձնահատուկ նշանակություն ունեցավ Բաքվի կուսակցական կազմակերպության համար, քանի որ Բաքվի բազմազգ պրոլետարիատի կազմում հայ բանվորները ներկայացնում էին ազգային բազմամարդ խմբերից մեկը»[5]։

«Պրոլետարիատ» թերթի առաջին համարում առաջնորդող հոդվածի փոխարեն տպագրվեց «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստ»-ը, որը գրել է Ստ. Շահումյանը Բ. Կնունյանցի և Ա. Ջուրարյանի ակտիվ մասնակցությամբ։ «Մանիֆեստ»-ում շարադրված էին հայ իսկրայականների նպատակներն ու խնդիրները։ «Մեր «միությունը»... Ռուսիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ճյուղերից մեկը լինելով, միանգամայն համերաշխ է նրա հետ և նրա հետ միասին կռվելու է հանուն Ռուսիայի պրոլետարիատի շահերի ընդհանրապես և հայկականի—մասնավորապես»[6]։ «Մանիֆեստ»-ը հետևողականորեն պաշտպանում էր կուսակցության ստեղծման ինտերնացիոնալ սկզբունքը։ «Սոցիալ-դեմոկրատիան,— ասված է «Մանիֆեստ»-ում,— միացնում է բոլոր բանվորներին առանց ազգերի խտրության մի ընդհանուր դրոշի տակ... Մենք պիտի ձգտենք բոլոր սոցիալիստական տարրերը և զանազան ազգությանց պատկանող բանվորներին ի մի ժողովել մեկ ընդհանուր սոցիալ-դեմոկրատական մարմին կազմակերպելու, միապետության դեմ ավելի հաջող մաքառելու համար»[7]։ Հայտնի է, որ «Մանիֆեստ»-ը արժանացավ Վ. Ի. Լենինի ջերմ հավանությանը։ Նա այդ մասին «Իսկրա»-ում հատուկ հոդված գրեց։ «Մենք ամբողջ հոգով ողջունում ենք «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստը,— գրել է Վ. Ի. Լենինը,— և մանավանդ ազգային հարցի ճիշտ դրվածքը տալու նրա ուշագրավ փորձը։ Խիստ ցանկալի կլիներ, որ այդ փորձը հասցվեր մինչև վերջը»[8]։

ՌՍԴԲԿ II համագումարի նախօրյակին Ռուսաստանի խոշոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններում հաղթանակեց իսկրայական ուղղությունը։ «Իսկրա»-ն լուրջ դիրքեր նվաճեց նաև Անդրկովկասում։ Այստեղ մասնավորապես աչքի էին ընկնում Թիֆլիսի, Բաքվի և Բաթումի կոմիտեն-

---

[4] «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 40։

[5] Քաղվածքը բերվում է ըստ Մ. Գրիգորյանի «Հայաստանում մարքսիստական քաղաքատնտեսության տարածման պատմությունից» գրքի, Երևան, 1976, էջ 46։

[6] Քաղվածքը բերվում է ըստ Խ. Բարսեղյանի «Մարքսիզմի տարածումը Հայաստանում» աշխատության, գիրք առաջին, Երևան, 1967, էջ 304։

[7] Նույն տեղում, էջ 305։

[8] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 411։



ը։ 1903 թ. մարտին հրավիրվեց Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների I համագումարը։ Այն որոշեց միավորել երկրամասի առանձին-առանձին գործող սոցիալ-դեմոկրատական կոմիտեները և կազմել ՌՍԴԲԿ Կովկասյան միություն։ Ընտրվեց նաև կուսակցական երկրային ղեկավար կենտրոն՝ ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտե։ Անդրկովկասի իսկրայական կազմակերպությունների հիմնադիր համագումարին մասնակցեց նաև Բ. Կնունյանցը, որն ընտրվեց Կովկասյան միութենական կոմիտեի անդամ։

Կոմունիստական կուսակցության պատմության մեջ ուրույն տեղ ունի նրա II համագումարը, որը շրջադարձային կետ էր ռուսական և միջազգային բանվորական շարժման մեջ։ Համագումարում ստեղծվեց նոր տիպի կուսակցություն, բոլշևիկների կուսակցությունը։ ՌՍԴԲԿ II համագումարին որպես Բաքվի կազմակերպության պատգամավոր վճռական ձայնի իրավունքով մասնակցեց նաև Բ. Կնունյանցը։ Համագումարում նա աչքի ընկավ լենինյան դիրքերի իր ակտիվ ու հետևողական պաշտպանությամբ, բոլոր հիմնական հարցերում գրավելով սկզբունքային դիրք։ Բավական է նշել, որ ՌՍԴԲԿ II համագումարի արձանագրությունների մեջ 80 անգամ նշվում է Բ. Կնունյանցի անունը[9]։

ՌՍԴԲԿ II համագումարում Բ. Կնունյանցը մերկացրեց Բունդի սեպարատիզմը։ «Բունդի տեղը կուսակցության մեջ» հարցը քննարկելիս նա հանդես եկավ երեք անգամ։ «Ես հաճույքով եմ ընդգծում այն փաստը,— համագումարում ասաց Բ. Կնունյանցը,— որ մեղանում միանգամայն բացակայում է կազմակերպական սեպարատիզմը, որը վերջին ժամանակներս այնքան ուժեղ է արտահայտվում Բունդի մեջ։ Մեր քաղաքներից յուրաքանչյուրում գոյություն ունեն կուսակցական կոմիտեներ, որոնք գործում են մի քանի լեզուներով... Եվ չնայած դրան, մինչև այժմ դրանից ոչ մի անհարմարություն առաջ չի եկել, և շարժման հաջողությունը Կովկասում չի թուլացել։ Ըստ իս, ներկայումս Բունդում տիրապետող տենդենցը սոցիալիզմի հետ ոչ մի ընդհանուր բան չունի»[10]։

Պաշտպանելով տարածքային հատկանիշներով կուսակցական կազմակերպություններ ստեղծելու լենինյան սկզբունքը, Բ. Կնունյանցը եզրակացնում էր, որ «Կուսակցության իդեալական կազմակերպության ձևը կլիներ բոլոր քաղաքներում կուսակցական միասնական կոմիտեների գոյությունը, որոնք աշխատեին այն լեզվով, որի պահանջը կզգացվեր»[11]։

Բ. Կնունյանցը ակտիվորեն մասնակցեց նաև ագրարային ծրագրի քննարկմանը։ Ագրարային ծրագիրը, ինչպես հայտնի է, գրել է Վ. Ի. Լենինը։ Այն նախատեսում էր վերացնել ճորտատիրության մնացուկները, ստեղծել գյուղացիական կոմիտեներ, որոնք կոչված էին ղեկավարելու գյուղացիության պայքարը իրենց իրավունքների համար։ Պաշտպանելով գյուղացիական կոմիտեներ ստեղծելու վերաբերյալ լենինյան դիրքորոշումը, Բ. Կնունյանցն ընդգծում է, որ նման կոմիտեները կոչնչացնեն ոչ միայն հողակտորները, այլև

---

9 Խ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, առաջին գիրք, էջ 339։

10 «Второй съезд РСДРП. Протоколы», М., 1959, էջ 61։

11 Նույն տեղում, էջ 104։

ճորտացման բոլոր պայմաններն ընդհանրապես։ «Ինչո՞ւ կապել գյուղացիական կոմիտեների ձեռները,— ասում է նա։— Թերևս նրանք ստիպված կլինեն բռնագրավել առանձին կալվածքներ»[12]։ Պատահական չէ, որ Վ. Ի. Լենինը «Մի քայլ առաջ, երկու քայլ ետ» գրքում նշում է, որ ագրարային հարցը քննարկելիս «Կովկասյան պատգամավորները... միանգամայն ճիշտ դիրք էին բռնել...»[13]։

Հայտնի է, թե ՌՍԴԲԿ II համագումարում ինչպիսի սուր պայքար ծավալվեց կուսակցության ղեկավար մարմինների ընտրությունների ժամանակ։ Այս կարևոր հարցը քննարկելիս դարձյալ Բ. Կնունյանցն աչքի ընկավ իր սկզբունքայնությամբ ու հետևողականությամբ։ Նա կրքոտ ելույթ ունեցավ և առաջարկեց թե՛ կենտրոնական կոմիտեում, թե՛ «Իսկրա»-ի խմբագրությունում ընտրել երեքական հոգի, այսինքն՝ երկու եռյակ։ Ըստ որում, Բ. Կնունյանցն ընդգծում է, որ այդ հարցը լուծելիս պետք է ելնել ոչ թե առանձին անհատների շահերից, մտածելով չլինի թե վիրավորվի չընտրված այս կամ այն անհատը, այլ «կանգնել կուսակցական շահերի, ընդհանուր գործի շահերի տեսակետի վրա»[14]։ Նա հանդես եկավ «Կենտրոնական հիմնարկների ընտրությունների մասին» բանաձևի նախագծով, որն ընդունվեց համագումարի կողմից։

Վ. Ի. Լենինը «Մի քայլ առաջ, երկու քայլ ետ» գրքում անդրադառնալով Բ. Կնունյանցի ճառին, նշել է, որ նա ամենից ճիշտ կերպով առաջարկել է կուսակցության ղեկավար մարմիններում ընտրել երկու եռյակ։ Համագումարից հետո Վ. Ի. Լենինը խորհուրդ էր տալիս կուսակցության պառակտման պատճառները պարզելու համար «Կարդալ և վերստին կարդալ ընկ. Ռուսովի (Բ. Կնունյանցի—Գ. Ա.) ճառը, որի փաստարկումները փոքրամասնությունը ոչ միայն չհերքեց, այլև նույնիսկ չվիճարկեց»[15]։

Հետաքրքրությամբ է կարդացվում «Բաքվի կոմիտեի զեկուցումը»[16] փաստաթուղթը, որը ՌՍԴԲԿ II համագումարի 12-րդ նիստում ներկայացրեց Բ. Կնունյանցը։ Այդտեղ պատմվում է Բաքվի կոմիտեի բազմակողմանի գործունեության, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ձևավորման ու նրանց վիճակի, Բաքվում՝ բազմազգ պրոլետարիատի այդ նշանավոր կենտրոնում գործադուլային շարժման, կուսակցական կազմակերպությունների ագիտացիոն ապրոպագանդիստական աշխատանքի և այլ հարցերի մասին։

Այսպիսին էր Բաքվի Կոմիտեի ներկայացուցիչ Բ. Կնունյանցի դիրքավորումը ՌՍԴԲԿ II համագումարում։

Համագումարից հետո ավելի են սրվում տարաձայնությունները բոլշևիկների և մենշևիկների միջև։ Մենշևիկներն իրենց պառակտիչ գործողություններով փորձում էին ձախողել համագումարի որոշումների կենսագործումը։ Անհրաժեշտ էր վճռականորեն պայքարել մենշևիկ կազմալուծիչների դեմ՝ հանուն երիտասարդ կուսակցության ամրապնդման։ Բ. Կնունյանցը, Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ, մասնակցում է այդ պայքարին, իր հոդված-

---

12 «Второй съезд РСДРП. Протоколы», էջ 246։

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 295։

14 «Второй съезд РСДРП. Протоколы», էջ 364։

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 399—400։

16 Այս փաստաթուղթը առաջին անգամ հրապարակվել է 1959 թ.՝ «Второй съезд РСДРП. Протоколы» ժողովածուում, էջ 514—532)։

ներում ու զեկուցումներում մերկացնում մենշևիկների վարքագիծը։ Համագումարից հետո նա աշխատում է «Իսկրա»-ի խմբագրությունում, մասնակցում թերթի 46—51 համարների հրատարակմանը։ Հենց այդ ժամանակ էլ նա «Կավկազեց» ստորագրությամբ «Իսկրա»-ում հանդես եկավ մի շարք արժեքավոր հոդվածներով՝ նվիրված Անդրկովկասում ծավալվող հեղափոխական շարժումների տարբեր հարցերին։ Բերենք մի օրինակ։ 1903 թ. հունիսի 12-ին ցարական կառավարությունը օրենք հրատարակեց հայ եկեղեցական գույքը պետականացնելու վերաբերյալ։ Բանն այն էր, որ հայկական դպրոցները հիմնականում պահվում էին եկեղեցական կալվածքներից ստացված եկամուտներով։ Ուստի օրենքը հայկական դպրոցներին զրկում էր նյութական միջոցներից։ Հունիսի 12-ի օրենքով փակվեց ավելի քան 300 դպրոց, հալածանք ոկսվեց հայ մտավորականների դեմ։ Հունիսի 12-ի օրենքի դեմ Հայաստանում և Անդրկովկասի հայաբնակ վայրերում տեղի ունեցան հակացարական ելույթներ։ Այս դեպքերին արձագանքեց նաև Բ. Կնունյանցը։ «Իսկրա»-ի 1903 թ. հոկտեմբերի 1-ի 49-րդ համարում «Կավկազեց» ստորագրությամբ լույս տեսավ նրա «Նոր կողոպուտ» հոդվածը։ «Մինչև այժմ չտեսնված դեպքեր են տեղի ունենում մեզ մոտ,— գրում է Բ. Կնունյանցը,— ամենախուլ տեղերից լուրեր են գալիս կառավարության հետ նոր զինված ընդհարումների, մասսայական ցույցերի, միտինգների մասին և այլն։ Գրեթե ամեն օր երևան են գալիս ժամանակավոր կազմակերպություններ, որոնք իրենց նպատակ են դրել այս ու այն ձևով դիմադրություն ցույց տալ կառավարությանը... Հեղափոխական փոթորիկով բռնկված է Անդրկովկասը։

Սխալ կլիներ կարծել,— շարունակում է Բ. Կնունյանցը,— թե միայն այդ օրենքը ի վիճակի կլիներ նման փոթորիկ առաջ բերել։ Կուլտուրական խաղաղ հիմնարկների սիստեմատիկ հետապնդումները, տխրահռչակ «Ռուսականացման քաղաքականությունը», 300-ից ավելի հայկական դպրոցների փակումը, բարեգործական հիմնարկների գործունեության սահմանափակումը, հրատարակչական ընկերությունների փակումը, և մի ամբողջ շարք նման միջոցառումները հետզհետե սուր հակամարտություն ստեղծեցին հայ բնակչության և կառավարության միջև, որը վաղ թե ուշ պետք է պոռթկար»[17]։

1903 թ. վերջերին Բ. Կնունյանցը, որպես կուսակցության Կենտկոմի գործակալ, վերադառնում է Ռուսաստան։ Նա լինում է Ռուսաստանի հարավում, Կովկասում և կուսակցական կազմակերպություններում, բանվորների շրջանում զեկուցում ՌՍԴԲԿ II համագումարի արդյունքների, կուսակցական կազմակերպությունների անելիքների մասին։ Ֆ. Ռիզելը իր հիշողություններում Բ. Կնունյանցի մի զեկուցման մասին գրել է. «Ժողովը տեղի էր ունենում ինչ-որ խոնավ փայտանոցում... Մեծ դժվարությամբ հասանք ժողովատեղին։ Պարզվեց, որ եկվոր ընկերը Բոգդանն է... Նա այնպիսի ջերմությամբ էր խոսում Վ. Ի. Լենինի և լենինյանների մասին, որ նրա այդ ճառը և Լենինի մեծ կերպարը ընդմիշտ մնաց իմ և ոչ միայն իմ, հիշողության մեջ»[18]։ Մինչև Ռուսաստան վերադառնալը Բ. Կնունյանցը ժնևից 1903 թ. վերջին ՌՍԴԲԿ II համագումարի արդյունքների մասին ծավալուն նամակ է ուղարկում Բաքվի

---

[17] Б. Кнунянц, Избранные произведения, Ереван, 1958, էջ 40։

[18] Հ. Ինճիկյան, նշվ. աշխ., էջ 111։

կոմիտեին[19]։ Նամակում նա Բաքվի ընկերներին պատմում է Համագումարի ընթացքի մասին, քննադատում մենշևիկներին, վերլուծում կուսակցության պառակտման պատճառները, բացահայտում ՌՍԴԲԿ II Համագումարի նշանակությունը։

1903 թ. վերջերին և 1904 թ. սկզբին Բ. Կնունյանցը ղեկավար մասնակցություն է ունենում ՌՍԴԲԿ Կովկասյան միության և Բաքվի կոմիտեների աշխատանքին։ Այնուհետև նա փոխադրվում է Մոսկվա։ Այստեղ էլ նա կոոպտացիայի է ենթարկվում կուսակցության Մոսկվայի կոմիտեի կազմում. սակայն շուտով, 1904 թ. փետրվարին, ձերբակալվում է։ Մեկ տարուց ավելի նա մնում է Տագանկայի բանտում։ Ն. Բաումանի, Վ. Լեգսիկի, Ե. Ստասովայի հետ Բ. Կնունյանցը մասնակցում է ՌՍԴԲԿ III Համագումար հրավիրելու լենինյան պլանի կենսագործման համար մղվող պայքարին։ Այս առումով հետաքրքրական են բանտից գրած նրա նամակները, որոնցում նա կրքոտությամբ հանդես է գալիս մենշևիկների դեմ, պաշտպանում լենինյան գիծը։ «Իմ ողջույնը լավ ընկերներին, հույս ունեմ, որ նրանցից ոչ ոք վետերանի (խոսքը Գ. Վ. Պլեխանովի մասին է—Գ. Ա.) պասկվիլների համար քիթը չի կախել։ Հաղորդիր նրանց, որ ես մարտի եմ ձգտում, միայն թե հանգամանքները թույլ տային»[20]։ Բանտում Բ. Կնունյանցը իմացավ 22 բոլշևիկների խորհրդակցության մասին, որն արտահայտվեց ՌՍԴԲԿ III Համագումար հրավիրելու օգտին։ Խորհրդակցության մասնակիցները քննադատեցին ոչ միայն մենշևիկներին, այլև նրանց, ովքեր հաշտվողական գիրք էին բռնել մենշևիկների նկատմամբ։ Բ. Կնունյանցն անմիջապես արձագանքեց դրան. «Ես շատ գոհ եմ,— բանտից ուղարկած նամակում գրել է նա,— որ վերջապես մեր հաշտվողականների դիմակը պոկված է... Աջ ու ձախ հարվածեցեք, վճռական ոչ մի գործողության, ընդհուպ մինչև հեղաշրջման առաջ կանգ մի առեք»[21]։

1905 թ. մարտին Մոսկվայում տեղի է ունենում Բ. Կնունյանցի դատը։ Ցարական դատարանում նա հանդես է գալիս ինքնակալությանը մերկացնող «համարձակ և գեղեցիկ» ճառով, որը լույս է տեսել «Դատ դատի դեմ» վերնագրով[22]։ Վ. Ի. Լենինի ցուցումով Բ. Կնունյանցի «Դատ դատի դեմ» ճառը Պետերբուրգի կոմիտեն հրապարակում է տասնյակ հազար օրինակով և տարածում բանվորների շրջանում։ Այնուհետև գրքույկի ձևով այն հրապարակվեց Բաքվի, Մոսկվայի և կուսակցության այլ կոմիտեների կողմից։ Հետագայում գրքույկը վերահրատարակվեց մի շարք լեզուներով։ Դատարանում արտասանած իր ճառը Բ. Կնունյանցն ավարտում է հետևյալ բառերով. «Դուք ուզում եք դատել մի հեղափոխականի այնպիսի ժամանակ, երբ դրսում հեղափոխություն է, դուք ուզում եք պաշտպանել այն իրավակարգը, որին պատմությունը մահվան է դատապարտել։ Դատեցեք, պարոնայք դատավորներ, իսկ մեզ ձեզ հետ կդատի հեղափոխությունը»[23]։

Բ. Կնունյանցը շուտով աղատվում է բանտից։ Ռուսաստանում ծավալվում էր 1905—1907 թթ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը։

---

19 Б. Кнунянц. Избранные произведения, էջ 57 — 66։

20 Հ. Ինճիկյան, նշվ. աշխ., էջ 122։

21 Նույն տեղում, էջ 123։

22 Б. Кнунянц, Избранные произведения, էջ 71 — 84։

23 Նույն տեղում, էջ 84։

Բ. Կնունյանցը նրա մասնակիցների առաջին շարքերում էր։ Բանտից ազատվելուց հետո նա կարճ ժամանակով լինում է արտասահմանում, այնուհետև գալիս է Պետերբուրգ։ 1905 թ. սեպտեմբերին Բ. Կնունյանցն ընտրվում է Պետերբուրգի բոլշևիկների կոմիտեի անդամ և ղեկավարում էր Կենտկոմի Հյուսիսային բյուրոյի ագիտատորների կոլեգիան։ Նույն թվականի հոկտեմբերին նա բոլշևիկների կողմից ընտրվեց Պետերբուրգի բանվորների դեպուտատների առաջին սովետի ղեկավար կազմում։ Հետաքրքիր է նշել, որ Պետերբուրգ վերադառնալուց հետո Վ. Ի. Լենինը մայրաքաղաքի սովետի հետ կապ էր պահպանում Բ. Կնունյանցի միջոցով։ Բոլշևիկների ջանքերի շնորհիվ Պետերբուրգի սովետը քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում սահմանեց ութժամյա աշխատանքային օր, արտադրության վրա բանվորական վերահսկողություն, հռչակեց մամուլի, խոսքի, ժողովների ազատություն։ Այդ տարիներին գրված «Բանվորների դեպուտատների առաջին սովետը», «Բանվորների դեպուտատների սովե՞տը թե՞ կուսակցությունը», «8-ժամյա աշխատանքային օրվա համար» և այլ հոդվածներում[24] Բ. Կնունյանցը վերլուծում է սովետի գործունեությունը, ընդհանրացնում նրա աշխատանքի փորձը։ «Բանվորների դեպուտատների առաջին սովետը» գրքույկն արժանացել է Վ. Ի. Լենինի ուշադրությանը։ Վ. Ի. Լենինի գրադարանավարուհի Շ. Մանուչարյանն իր հիշողություններում նշում է, որ Վ. Ի. Լենինն իր աշխատասենյակում թողնում էր միայն այն գրքերը, որոնք իրեն պետք էին ընթացիկ աշխատանքի և տեղեկանքների համար։ Պատահական չէ, որ Վ. Ի. Լենինի մոտ պահվող փոքրաթիվ գրքերի մեջ եղել է նաև Բ. Կնունյանցի նշված գրքույկը։

1905 թ. վերջին Բ. Կնունյանցը Պետերբուրգի սովետի մյուս ղեկավար գործիչների հետ նորից ձերբակալվում է։ Ցարական դատարանը նրան դատապարտում է ցմահ աքսորի։ 1907 թ. սկզբին նրան ուղարկեցին Տոբոլսկի նահանգի Օդրորսկ գյուղը։ Երեք ամիս մնալով աքսորավայրում, նա փախչում է, վերադառնում Պետերբուրգ, ապա այնտեղից անցնում արտասահման։ 1907 թ. օգոստոսին Բ. Կնունյանցը Վ. Ի. Լենինի, Ա. Լունաչարսկու և Մ. Լիտվինովի հետ որպես բոլշևիկյան կուսակցության ներկայացուցիչ մասնակցում է II ինտերնացիոնալի VII (Շտուտգարդի) կոնգրեսի աշխատանքին։ Կոնգրեսից հետո Բ. Կնունյանցը 1907 թ. նոյեմբերին Ժնևում լույս տեսնող բոլշևիկյան ուղղության «Ռագուգա» թերթի երրորդ համարում հրապարակում է «Նոր ինտերնացիոնալի 7-րդ կոնգրեսը» հոդվածը[25]։ Նրանում Բ. Կնունյանցը վերլուծում է կոնգրեսի ընդունած որոշումները, հիմնավորում բոլշևիկների տեսակետները քննարկվող հարցերի վերաբերյալ։ 1907 թ. նոյեմբերին Բ. Կնունյանցը մասնակցում է ՌՍԴԲԿ IV կոնֆերանսին, որը տեղի ունեցավ Հելսինգֆորսում։

Բ. Կնունյանցի գրական ժառանգության մեջ ուրույն տեղ ունեն տնտեսագիտական հոդվածները։ Այդ հոդվածներում նա արծարծում է բանվոր դասակարգի վիճակի, աշխատանքային օրվա կրճատման անհրաժեշտությունը, գործազրկության, իմպերիալիզմի, դասակարգերի և դասակարգային պայքարի հարցերը։ Բ. Կնունյանցը ցույց է տալիս, որ բուրժուական հասարա-

---

24 Նույն տեղում, էջ 202—321, 97—101, 168—201։

25 Նույն տեղում, էջ 387—411։

կարգում բանվորը զրկված է արժանապատվությունից և երբեք չի ստանում իր աշխատուժի լրիվ արժեքը։ «Ընդհակառակը, աշխատում է նա այնքան,— գրում է նա,— որքան նրանից պահանջում է կապիտալիստը, ուտում և խմում է միշտ այնքան, որքան պետք է, որպեսզի նա սովից չմեռնի. այնպես որ վերջին դեպքում նա կդադարեր տիրոջ համար օգտակար լինել»[6]։ Մի այլ առիթով անդրադառնալով գործազրկության պրոբլեմին, Բ. Կնունյանցը Բաքվի օրինակով ցույց է տալիս, որ կապիտալիզմի օրոք գործազրկությունը, այսպես կոչված հարաբերական գերբնակչությունն անխուսափելի է։ Բ. Կնունյանցը համոզված էր սոցիալիզմի հաղթանակի նկատմամբ։ Նույնիսկ ցարական դատարանում արտասանած ճառում նա չի թաքցնում իր համոզմունքը։ «Մեր հիմնական նպատակը,— դատարանում հայտարարեց նա,— սոցիալիզմն է և դեպի այն տանող միակ ուղին՝ սոցիալիստական հեղափոխությունը, որին, մեր խորը համոզմամբ, տանում է մեր տնտեսական կյանքի ամբողջ զարգացումը։ Մենք համոզված ենք, որ... դրա համար անհրաժեշտ պայմանը պրոլետարիատի դիկտատուրան է, այսինքն՝ պետության մեջ պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության գրավումը»[7]։

Իր կյանքի վերջին տարիներին (1908—1911 թթ.) Բ. Կնունյանցն ապրում էր Բաքվում։ Որպես աքսորական նա Բաքվում թաքնվում էր Ս. Մարգարով աղգանվամբ։ Կուսակցական աշխատանքին Բ. Կնունյանցը մասնակցում էր մամուլի, բանվորական ակումբների և այլ լեգալ կազմակերպությունների միջոցով։ Նա աշխատակցում էր օրինակ «Գուդոկ», «Պրոմիսլովի վեստնիկ», «Բակինսկի դեն», «Բակինսկայա պեչատ» բանվորական լեգալ թերթերին։ Դասախոսություններ էր կարդում բանվորական «Գիտություն» ակումբում, հաճախ հանդես գալիս տեղի գրական-գեղարվեստական խմբակում և այլն։

1911 թ. սեպտեմբերին Բ. Կնունյանցն արդեն ութերորդ անդամ ձերբակալվեց և նետվեց Բաքվի Բայիլովյան բանտը։ Այստեղ էլ նա հիվանդացավ տիֆով և 1911 թ. մայիսի 14 (27)-ին 33 տարեկան հասակում մահացավ բանտի հիվանդանոցում։

Բ. Կնունյանցը և՛ աշխատանքում, և՛ կենցաղում, և՛ ընկերների շրջանում աչքի էր ընկնում պարզությամբ, ազնվությամբ, սկզբունքայնությամբ, անհողդողդ կամքով և բանվոր դասակարգի գործին անսահման նվիրվածությամբ։ Բ. Կնունյանցը, ինչպես նշել է Ստ. Շահումյանը, աչքի էր ընկնում, «իր անձնական բարձր բարոյական մաքրությամբ»[28]։

Մոտ յոթ տասնամյակ է անցել այն օրից, երբ կյանքից հեռացավ Բ. Կնունյանցը։ Անցած տարիներին, շատ բան է փոխվել մեր երկրի ու կուսակցության կյանքում։ Այն գործը, որի համար մարտնչում էր Բ. Կնունյանցը, հաղթանակել է։ Իրականացել է նրա երազանքը։ Սովետական ժողովրդի անձնվեր աշխատանքով Սովետական Միությունում հաստատվել է զարգացած սոցիալիստական հասարակարգ, գործնականում լուծվում են կոմունիզմի կառուցման խնդիրները։

---

26 Նույն տեղում, էջ 148։

27 Նույն տեղում, էջ 81։

28 Ստ. Շահումյան, Երկեր, երեք հատորով, հ. 2, էջ 155։